ՕԾՈՒՄ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՆՈՐԸՆՏԻՐ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

«**Կիրակի է, 1955 թ. հոկտեմբերի 2-ը: Առավոտ է: Թափանցիկ, կապույտ երկինքը խոսպանում է աշնանային պայծառ, արևոտ օր: Զգացվում է վաղորդյան զովաշունչ, թեթև, հաճելի քամին: Մեղմօրոր շշնջում են վանքի բարդիները**», - այսպես է սկսվում «Էջմիածին» ամսագրում նորընտիր Վազգեն Ա Հայրապետի օծման սրբազան արարողության նկարագրությունը:

1999 թվական:

Անցել են 44 երկար ու ձիգ տարիներ, և կրկին Հայրապետական ձեռնադրության և օծման շքեղ հանդիսության հաճելի սպասումներով են լցված հայ հավատացյալների սրտերը:

Ո՛չ, այս անգամ օրը կիրակի չէր, սակայն կապույտ երկնքի շրթներին կրկին աշնանային արևոտ ու պայծառ եղանակի խոստումներ կային:

Այդ օրը տոն էր «**Սրբոց Հայրապետացն Մեսրոպիանոսի, Աղէքսանդրոսի եւ Պօղոսի խոստովանողին եւ նօսրարացն Մարկիանոսի եւ Մարտիրոսի**»:

Տեղի էին ունեցել կաթողիկոսական նոր ընտրությունները, որոնց ընթացքում Ազգային Ժողովում կատարված ողբերգական ու արյունալի դեպքերը կիսակատար էին թողել Լուսավորչի Աթոռի նոր գահակալին մատուցվելիք խնդությունը:

Նախապես՝ հոկտեմբերի 31-ին ծրագրված Ամենայն Հայոց նորընտիր Հայրապետի Ձեռնադրության և Օծման արարողությունները հետաձգվել էին: Եպիսկոպոսաց ժողովում խորհրդակցական մի քանի հանդիպումներից հետո նորընտիր Հայրապետի գլխավորությամբ որոշվել էր արարողությունը կատարել նոյեմբերի 4-ին, հինգշաբթի: Առավոտյան ժամերգությունն ավարտվել էր, և Մայր Աթոռի շրջափակը ասպիճանաբար լցվում էր ուխտավորների բազմությամբ:

Հոգևորականներից ու սարկավագներից շատերն աշխույժ գնում էին դեպի Վեհարան՝ հանդիսավոր թափորով Մայր Տաճար վերադառնալու: 10-ն անց էր 10 րոպե, հնչեցին Տաճարի նախապատրաստական զանգերը: Վեհարանում տակավին չէին զգեստավորվել բոլորը, ովքեր պետք է Ս. Սեղան բարձրանային: Սպիտակ շապիկներ, փորուրար, գոտի, բազպաններ, վակաս, եմիփորոն, շուրջառ, խույր ...

Զգեստավորված են:

Ամենայն Հայոց նորընտիր Գարեգին Բ Կաթողիկոսի գլխավորությամբ հանդիսավոր թափոր կազմվեց, որը զանգերի երկար ու հեռուներում արձագանքող ղողանջներին համընթաց, Խաչատուր Կեչառեցու «Խորհուրդ խորին» աննման մեղեդու ծանր ու համաչափ հնչյունների ներքո՝ ուղղվեց դեպի Մայր Տաճար:

Վառ ու արտահայտիչ գույները թափորին առանձնակի շքեղություն էին հաղորդում: Առջևից ընթանում էին կարմիր, մինչև ծնկները հասնող զգեստներով շաթիրները՝ ձեռքներին՝ փայտյա, վերնամասը կլոր արծաթյա զանգվածով գավազանները: Նրանց հետևում էին ջահակիրները, ապա՝ խաչակիրներն ու խաչվառակիրները և կերոնակիր դպիրները: Այնուհետև դանդաղաքայլ ու հանդիսավոր գալիս էին սարկավագները, քահանաները, աբեղաները, վարդապետներն ու եպիսկոպոսները:

Երկար ձգվող թափորի վերջից ընթանում էին հանդիսավոր զգեստավորված Ձեռնադրող 12 եպիսկոպոսները, որոնց երկտող ձգվող շարքի միջով երկու վարդապետ բռնել էին ճերմակ մետաքսի վրա գեղեցկորեն ասեղնագործված «**Գառն Աստուծոյ**» պատկերը: Վերջում՝ չորս պատվավոր ազգայինների վեր պարզած Հայրապետական ամպհովանու ներքո, քայլում էր նորընտիր Հայրապետը՝ «Միաւոր և փառաւորեալ» խորհրդի ինքնամփոփ ճաշակմամբ և Աստծու կոչին ընդառաջողի պատրաստակամությամբ:

Ակամայից մտածում ես Հայոց Հայրապետների ոսկե շղթայի մասին:

Նման ամպհովանու ներքո արդեն 132-րդ Հայրապետն է մուտք գործում Մայր Տաճար, և նրանցից ամեն մեկն ունեցել է իր իղձերն ու տեսիլքները, որոնցից մի մասը դրոշմվել է Հայոց Եկեղեցու և ազգի պատմության գարեգրության էջերում, մյուս մասը՝ ժառանգություն թողնվել սերունդներին՝ ի կատար ածվելու ակնկալությամբ ու երազով:

Եվ ահա նոր Հայրապետի հետ՝ նոր իղձեր, ժառանգություն թողնված պատմության ճերմակ նոր էջեր, որոնք պետք է գեղազարդվեն Գարեգին Բ Հայրապետի հայրական ու հովվապետական շնչով և անձնվեր ծառայությամբ:

Թափորը մոտենում էր Տաճարին: Չորս բուրվառակիրներ անընդհատ խնկարկում էին Հայոց Հայրապետին.

«Խունկ անոյշ,
Բուրումն հոգևորական
Մատուցանեմք Քեզ,
Հայրապետ ընտրեալ, - արձագանքվում էր կարծես բուրվառների զրնգոցից:

Բուրվառների «երաժշտությանը» համահունչ՝ թվում էր, թե պար էին գալիս երկու վարդապետների ձեռքերի քշոցների սկավառակները:

«ՄՈՒՏՆ Ի ՏԱՃԱՐ ԸՆԴ ԱՄՊՀՈՎԱՆԵԱՒ»

ՍՈՒՍԱՆ ԵՐԵՄՅԱՆԻՆ

Հավատացյալների բազմությունը խռնվել էր Մայր Տաճարի մուտքի առջև: Առջևում կանգնածները փորձում էին «ճեղքել» հոգևորականաց շարքը՝ Հայրապետին տեսնելու համար, վերջում կանգնած մի քանիսը ափսոսելով, որ Զաքեոսին հասակակից են, ոտքերի ծայրերի վրա բարձրանալով էին ուզում լրացնել այդ բացը:

Թափորը շարունակում էր իր երթը, զանգերը ուրախության ճայթյուններով էին դիմավորում Հայրապետին՝ և խմբավարի ձեռքերին ներդաշնակ մթնոլորտը «ճեղքվեց» «Հրաշափառ Ասպուած» շարականի հաղթական հնչյուններով:

«Հրաշափառ Ասպուած
Եւ միշտ բարեխնամող
Որ յառաջ գիտութեամբ
Զփրկութիւն Հայապանեայցս
սկզբնաւորեալ»:

Վաղուց էր սկզբնավորվել Հայոց փրկությունը, սակայն մշտակարկաչ առվակի նման շարունակվում է: Շարունակվում էր Հայրապետին դեպի Տաճար առաջնորդող հանդիսաշուք քայլերթի հետ:

Թափորը Տաճարում էր:

Ներսում լեցուն ժողովուրդ կար: Ս. Խորանը հրավառվում էր բազմաթիվ մոմերով ու պսպղացող ճաճանչներով: Խնկաբույր ամպը շերտ-շերտ կապտավուն մշուշ էր կապել: Ամենուր տոնական տրամադրություն էր. հինավուրց քարերից ու նկարազարդ որմերից հնամենի ու սրբալույս շողեր էին արձակվում՝ ջերմացնելով հավատացյալ հոգիները:

Ապյանում դրված աթոռները զբաղեցված էին: Իրենց հատկացված տեղերում բազմել էին ԱԵԺ-ի պատգամավորներ, պետական-քաղաքական ու հասարակական գործիչներ, ինչպես նաև գիտության, մշակույթի ու գրականության բնագավառի ներկայացուցիչներ: Քույր Եկեղեցիների կողմից սրբազան արարողությանը ներկա էին.

Ա. Ղպտի Ուղղափառ Եկեղեցի

1. Մետրոպոլիտ Բիշոյ (Սուրբ Սինոդի գլխավոր քարտուղար)
2. Յոհանիս եպիսկոպոս (Պատրիարքարանի քարտուղար)

Բ. Հույն Ուղղափառ Եկեղեցի

1. Մետրոպոլիտ Դամասկինոս (Սուրբ Սինոդի գլխավոր քարտուղար)
2. Վասիլիոս եպիսկոպոս Կարայանիս (Կիպրոս)

Գ. Ռուս Ուղղափառ Եկեղեցի

Պիտիրիմ (Մետրոպոլիտ Վոլոկոլամսկի և Յուրևսկի)

Դ. Վրաց Ուղղափառ Եկեղեցի

1. Թեոդոր (եպիսկոպոս Ախալցիխեի)
2. Սերաֆիմ (եպիսկոպոս Ախալքալաքի և Բորժոմիի)
3. Գերասիմ (եպիսկոպոս Ջուգդիդիի և Ցայիշիի)

Ե. Հռոմի Կաթոլիկ Եկեղեցի

1. Կարդինալ Էդուարդ Կասիդի (Քահանայապետական խորհրդի և Քրիստոնեական միության գրասենյակի նախագահ)
2. Պիտեր Ստեփան Զուրբրիգգեն (Հայաստանում Պապական նվիրակ)
3. Ջերարդ Դաուքոուրթ (Օղեանի եպիսկոպոս)
4. Հայր Ջոն Բոննի

Զ. Անգլիկան Եկեղեցի

Դեյվիդ եպիսկոպոս Վիլքոկս

Է. Գերմանիայի Կաթոլիկ Եկեղեցի

Դոկտ. Ալբերտ Ռաուխ (Ռեգենսբուրգի Արևելյան Եկեղեցիների ինստիտուտի տնօրեն):

Ժամանեցին նաև ՀՀ և Արցախի պետական այրերը՝ գլխավորությամբ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի և նորընտիր վարչապետ Արամ Սարգսյանի, ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի և ԱԺ նախագահ Օլեգ Եսայանի:

Հայրապետական անդրանիկ Պատարագը սփռվում էր նաև Հայկական հեռուստատեսությամբ՝ հայու օջախներից ներս տանելով աղոթքների ու մեղեդիների մեղմօրոր հնչյունները:

Ապյանի կենտրոնում կանգնած էր նորընտիր Հայրապետը՝ հայացքը Տաճարի հինավուրց կամարներին ու շրթներին՝ Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի բարօրության համար աղոթք սրտաբուխ:

Այնուհետև հանդիսավորապես զգեստավորված վարդապետաց ու սարկավագաց դասը առաջնորդվեց դեպի Ս. Սեղան: Խորան բարձրացան Ձեռնադրող տասներկու եպիսկոպոսներ՝ երկու շարքով, վեց-վեց:

Պատարագը շարունակվեց մինչև Ճաշու ընթերցվածները: Հայրապետն արտասանեց «**Զի ողորմած և մարդասէր ես** ...» մաղթանքը և խորին երկյուղածությամբ ու ջերմեռանդությամբ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի, առընթերակա Պատրիարք Հայրերի կողքից առաջացավ դեպի Ս. Խորանի առաջնամասը և ծնրադրեց:

Փեշակիր Նավասարդ և Սեպուհ եպիսկոպոսները բռնել էին Մայր Մաշտոցը, և Հայրապետը՝ հանդարտ ու վերացած, ընթերցել սկսեց «**ի լուր ամենեցուն զթուղթն ուխտի իւրոյ և խոստման**».

«Գարեգին Ծառայ Քրիստոսի և Եպիսկոպոս վիճակին Արարատեան. միաբան սրբոյ ուխտիս Էջմիածնի, կամօքն Աստուծոյ և ընտրութեամբ համօրէն ազգիս Հայոց կոչեցեալ յԱրարատեանս Աթոռ Կաթողիկոսութեան Ամենայն Հայոց, ապաւինեալ յօգնականութիւն շնորհաց Բարձրելոյն՝ խոստանամ և ուխտեմ առաջի Սրբոյ Սեղանոյս և աստուածընկալ սուրբ նշանացս, յանձն առնուլ զպաշտօնս զայս եպիսկոպոսապետութեան Հայաստանեայցս Եկեղեցւոյ, և բոլորապտուղ նուիրմամբ ընծայել զանձն իմ յանվթար կատարումն աստուածադիր օրինաց և Կաթողիկոսական պարտուց, և առաջնորդել ազգիս Հայոց ըստ ուղղափառ վարդապետութեան Քրիստոսական կրօնից, ըստ մերոյս Եկեղեցւոյ դաւանութեան և ըստ Հայրապետական կարգաց ու կանոնաց Աստուածպաշտութեան, անսպերիւր և անխոտոր ընթանալով յամենայն ընդ լուսաշաւիղ հետս գնացից արժանաժառանգ Յաջորդաց Սրբոց Առաքելոցն Թադէոսի և Բարդողիմէոսի և Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի երկրորդ Լուսաւորչի՝ զգուշաւոր պահպանութեամբ իրաւանց Մայր Աթոռոյս Հայաստանեայցս»:

Ուխտագրի ընթերցման ընթացքում Ձեռնադրող եպիսկոպոսներն ու Արամ Ա Կաթողիկոսը, ինչպես Մաշտոցում է գեղեցկորեն ասվում, «**շուրջանակի պար առեալ** ...» կանգնել և փոխնիփոխ ընթերցում էին սաղմոսները: Այնուհետև բոլորը մոտեցան ծնրադրած Հայրապետին և աջերը մեկնելով քիչ հետո մյուռոնով հեղվելիք ու սրբվելիք Հայրապետի գլխին՝ միաբերան արտասանեցին.

«**Մեք դնեմք ձեռս ի վերայ, և ամենեքեան աղօթս արարէք, զի արժանաւոր լիցի սա զիշխանութեան Առաքելական Աթոռոյս անարատ պահել առաջի Աստուծոյ**»:

Ապա Հայրապետը ծնրադիր առաջացավ՝ ձեռքերն ի նշան աշխարհից հրաժարման բարձրացրած և ուխտի կատարյալ գիտակցությամբ, իսկ դպրաց և սարկավագաց դասը ձայնեց. «**Աստուածային և երկնաւոր շնորհ [...] կոչէ զԳարեգին արքեպիսկոպոս Արարատեան վիճակի յեպիսկոպոսութենէ ի կաթողիկոսութիւն**»: Հոգեզմայլ մեղեդու ավարտին Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Մեսրոպ արքեպս. Գրիգորյանն ընթերցեց կանոնական «Գոհանամք զՔէն» աղոթքը՝ նորընտիր Հայրապետի համար հայցելով Տիրոջից. «**Տո՛ւր սմա զառաքելական և զհայրապետական շնորհս, զօրացո՛ զսա ի գործս բարիս, կալ առաջի քո անարատ վարուք և անսայթաք գնացիւք յամենայն ճանապարհս արդարութեան**»:

Ապա կարդացվեցին սուրբգրային հատվածներ, որոնք իրենց լրմանը հասան Ավետարանական դրվագի երգեցիկ ընթերցանությամբ, որից հետո Ս. Պատարագը շարունակվեց մինչև «Ողջոյն»-ի պահը: Այս ընթացքում Գարեգին Բ Հայրապետը բազմել էր Ս. Սեղանի աջ կողմում դրված

գահավորակին, և երբ դպրաց դասը ձայնեց «Ասպուած մեծ» քարոզը, «Նուիրեալն ի Հայրապետութիւն» կրկին ծնրադրեց: Ամբողջանվեր ծառայության պատասխանատվությամբ լցված Հայրապետի համար ընթերցվեց կանոնական ևս մեկ աղոթք, որում աղաչանք էր մատուցվում. «**Շնորհեա՛ սմա սիրտ զգաստ զգուշութեամբ պահել զամենայն զպատուիրանս քո, սիրել զքեզ յամենայն զօրութենէ և ի բոլոր սրտէ և ի բովանդակ մտաց իւրոց** ...»:

Աղոթքից հետո արարողության ամենասրտաշարժ ու գրավիչ պահն էր:

Երկու բուրվառակիրների ու քշոցակիրների ուղեկցությամբ Շահան արքեպս. Սվաճյանը Տաճարի հյուսիսային պատի մեջ գետնեղված խորհրդարանից հանդիսավորապես հնչող «Կենդանարար Ասպուած» շարականի երգեցողության ներքո Ս. Խորան է բարձրացնում Ս. Մեռոնի փոքրիկ ու լույսերի տակ պսպղացող աղավնին:

Խորանում Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսը, երկյուղածությամբ վերցնելով մյուռոնաթափ աղավնին, բարձրացրեց՝ ձայնելով «Առաքելոյ աղաւնոյ» կենդանարար շարականը, և Սրբալույս Մյուռոնը հեղեց Հայրապետի գագաթին: Մյուռոնը գագաթից հոսում էր դեմքին՝ իր այդ հոսքի միջոցով 1700-ամյա հինավուրց մեր Եկեղեցու սրբազան Հայրապետների բեղմնավոր գործունեության ու հայ ժողովրդի հերոսական մաքառումների ու մաքրակրոն կյանքի գոտեպնդող շարժապատկերներ գծագրելով Սրբության օծումով մաքրագործվող Հայրապետի մտքում:

Մեռոնը տաք էր:

Շրջան կազմած եպիսկոպոսներն ու Պատրիարք Հայրերը մոտեցան Հայրապետին և կատարեցին օծումը. «**ի միասին բոյթ մատամբ իւրեանց նկարելով իմն սրբալոյս Միւռնաւ ի գագաթանէն և ի վայր [...] որպէսզի առնուլ իւղոյն զտարազ ճառագայթաձև խաչին**»:

«Եւ յօծանելն» երիցս հնչեց օծման սրտաշարժ մեղեդին. «Ամէն, ալելո՛ւիա, ալելո՛ւիա, ալելո՛ւիա»:

Սուրբ է Հայրապետն Հայոց և Ասպվածարյալ: Այս պահից սկսյալ օծյալն իր մեջ կրում է Հովհաննու Մկրտչի՝ Քրիստոսին ուղղված խոսքերի գաղափարը. «**Միաւասիկ գառն Ասպուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի**» (ՀՈՎՀ. Ա 29):

Ի նշան այս խորհրդի, օծումից անմիջապես հետո օծյալի գլխին գցում են Հայրապետական սպիտակ, ոսկեթել քողը՝ «Գառն Ասպուծոյ» պատկերով: Ապա գոտու աջ կողքից կապում են կոնքեռը, մատուցում նափորտը՝ «**բազմախաչ ունելով նկարակերտ և ասեղնագործ ատորոտս և անկիւնս զարդարեալս**», և գավազանը:

Պետք է նշել, որ վերը նշվածները, ինչպես և Հայրապետական մատանին, Կաթողիկոսական իշխանության առանձնանշաններն են, որոնցից

«ՀՅՏ ՈՎՇ ՈՃԻՍԻՍԷ ՀՃ ՈԵՈՅՈՏՈԼ ՅՍԻՈՂՈՅՇ ՂՈԻՂՇ»

ՔԱՂՑՐ Է ՔՈ ԼՈՒՇԸ, ՏԵՐ

ԳՈՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԱՌՔ ՔԵԶ, ՏԵՐ ԻՄ ԱՄԵՆԱԿԱԼ

«ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՎ ԱՄԲԱՍՍԱԴՈՐ ՀԱՅՐԱՊԵՏ»

«ԱՌԱՔԵԼՈՅ ԱՂԱՒՆԻՈՅ». ԱՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ՀԵՂՄԱՆ ՊԱՀԻՆ

«ԳԱՌՆ ԱՍՏՈՒԾՈՅ»

յուրաքանչյուրը խորհրդանշաբար հարաբերվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի կանոնական իրավասության հետ:

Կոնքեռը, որ մյուս Եկեղեցիներում սովորաբար եպիսկոպոսական զգեստավորման մի մաս է կազմում, մեզ մոտ տրվում է միայն Կաթողիկոսին, իսկ բացառիկ պարագաներում՝ շնորհվում նաև Պատրիարքներին: Այն սովորաբար Ավետարանական հովվական մախաղի նշանակն է և հովվական գավազանի հետ ամբողջացնում է հովվության խորհրդանշական պատկերը:

Նափորտը նույնն է, ինչ որ քահանայական շուրջառը, սակայն Կաթողիկոսական զգեստավորման պարագային մեկ տարբերությամբ, որ ասեղնագործված խաչերը շատ են՝ ի նշան Կաթողիկոսական իշխանության ծանրության:

Հայրապետական ամբողջական զգեստավորումից և իշխանության շնորհաբաշխումից հետո դպրաց դասը հնչեցրեց դարեր առաջ գրված, բայց և ներկաների տրամադրությունից բխող հոգեզմայլ շարականը.

«**Այսօր ուրախացեալ ցնծան**
Երկնից բազմութիւնք,
Քանզի շնորհեցաւ մեզ
Քահանայապետ յաւիտենից»:

Այնուհետև ընթերցվեցին Պետրոս առաքյալի թղթից ու Հովհաննու Ավետարանից համապատասխան հատվածները:

Քրիստոսի՝ Պետրոս առաքյալին ուղղված Ավետարանական հատվածի «Եկ զկնի իմ» արտահայտությամբ Օծման սրբազան արարողությունը եզրափակվեց:

«Եկ զկնի իմ», - այս էր հնչում նաև նորընծա Հայրապետի ունկերին և խորախորհուրդ արձագանքում նրա հոգում:

Ավարտվեց, և սկսվեցին շնորհավորականներն ու աջհամբույրները:

Նորընծա Հայրապետին իրենց սրտի ու շնորհավորանքի խոսքերն ուղղեցին Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսը (տե՛ս էջ 18), Երուսաղեմի հայոց Պատրիարք Թորգոմ արքեպս. Մանուկյանը (տե՛ս էջ 20) և Կ. Պոլսո հայոց Պատրիարք Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը (տե՛ս էջ 21):

Շնորհավորանքներից հետո՝ փառապրությամբ առ Աստված, բոլոր ներկաներին դիմեց Մյուռոնաբույր Հայրապետը՝ հուզական խորը ապրումներով իր սերն արտահայտելով Հայոց Եկեղեցու և ողջ հայ ժողովրդի նկատմամբ (տե՛ս էջ 8):

Ապա Սուրբ Պատարագը շարունակվեց:

Հայրապետը, տակավին, ճերմակ քողով էր և ամբողջովին խորասուզված սրբազան խորհրդի մեջ:

ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՆՈՐՈԳ ՕԾՅԱԼ ԳԱՐԵԳԻՆ Բ ՀԱՅՐԱՊԵՏԻ

«Խորին խորհուրդը» ավարտվեց, և նույն թափորը նորընծա Հայրապետին ամպհովանիով առաջնորդեց դեպի Վեհարան, որն արդեն չորս ամիսներ էր, ինչ սուգի մեջ սպասում էր Լուսավորչի նոր գահակալին:

Բազմությունը բարձրացավ գահասրահ, որտեղ Հայրապետական մարմարյա ճերմակ գահին բազմել էր Գարեգին Բ Կաթողիկոսը, իսկ նրա աջ և ձախ կողմերում՝ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը, Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսը, Երուսաղեմի և Կ. Պոլսո հայոց Պատրիարքներ Թորգոմ արքեպս. Մանուկյանը և Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը: Սրահի պատերին կից դրված գահավորակներին բազմել էին եպիսկոպոսներից շատերն ու պետական այրեր:

Ամենայն Հայոց Հայրապետի գահակալությունն էր...

Նորընծա Հայրապետին իր շնորհավորանքները հղեց ՀՀ նախագահը՝ ևս մեկ անգամ շեշտելով Հայ Եկեղեցու և Լուսավորչի գահակալի պատմական դերն ու նշանակությունը հայ ժողովրդի կյանքում (տե՛ս էջ 22), ապա ՀՀ նախագահին ու ներկաներին երախտագիտության իր խոսքն ուղղեց Նորին Սրբությունը:

Խոսքի ավարտին՝ կրկին շնորհավորանքներ, ուրախության արցունքներ ու բարեմաղթանաց մրմունջներ:

Եվ ուրախության այս պահին անդրադառնալով, թե իրապես ո՞րն է ցնծության շարժառիթը, հիշում ես նորընտիր ու նորընծա Հայրապետի տակավին 1994 թվականին արտահայտած այն միտքը, որը խորապես բացահայտում է հայ ժողովրդի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նկատմամբ ունեցած ջերմ սերն ու վերաբերմունքը:

«**Գահը Լուսավորչի,**- գրում է Գարեգին արքեպս. Ներսիսյանը,- **վեհ է ու նվիրական յուրաքանչյուր հայորդու համար, իսկ ընտրյալ Հայրապետը՝ Ասպվածպարգև և ազգընծա**»:

Նորին Սրբության խոսքերը փոխառած նույնն էր կրկնում, կարծես, այդ օրը հավաքացյալների հարուկենտ

Հայրապետ Ընտրյալ՝ Ասպվածպարգև և Ազգընծա,
Հոգիդ խնամքի մեջ միտդ թող մի՛շտ ցնծա:

ՍԻՐՈ ՃԱԾ ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ՍԵՂԱՆԱՏԱՆԸ

Օրը երեկոյացել էր, առավոտյան և կեսօրին Մայրավանքում հավաքված բազմությունը սրբազան արարողությունից հետո ասպիճանաբար նվազել էր, և Տաճարի շրջափակում երևում էին հավատացյալների հարուկենտ

ԷՄՅՈՒԷՆԻ ԿՈՄՅՈՒՀԻ ՀԵՌԽՈՐԿՈՄ ՊՈՒՅՍԻՀԱՍՏԱԼՈՒՄՆԵՐԸ
ԿՈՄՏՈՈՒԵՆԻ Հ1 ՌԻԱՍՄԻՈՒԵՅՍԱԿԱՆ ՊԿՏԱԼՈՒՅԵՆԻ ՈՒՂՂՅԱՍԱՄ

ՊԱՅՏԱՍՈՒՄ ԿՈՂՄՈՒԷՋԻ ՏԵՂԷ ԿԱԶՄԱՎՈՐՎԱԾ
ՎԻՍՆԱՔ ՊՈՒՀՈՑՉԱԳԻԳ-ՊԱԼԵՈԼԵՇՈՒ ԶՏԳԱՆՈՎԵՈՒԷ ԱԿՏՊԵՎԱՍ

խմբեր, որոնք երկյուղածությամբ մուրք էին գործում աղոթարան՝ ճաշակելու ընդամենը մի քանի ժամ առաջ ավարտված օծման հանդեսի կրակվին չմարած հոգեզվարթության զգացումները:

Նույն պահին մարդաշատ էր Մայրավանքի սեղանատունը: Հոգևորականաց մի սրվարաթիվ բազմություն հավաքվել էր սիրո ճաշի սեղանների շուրջ՝ անհամբեր սպասելով Ամենայն Հայոց նորընծա Հայրապետի ժամանմանը: Ծուրով ժամանեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հայրապետին ընկերակցում էին Երուսաղեմի հայոց Պատրիարք Թորգոմ արքեպս. Մանուկյանը և բարձրաստիճան հոգևորականներ: Հայրապետի օծման սրբազան արարողությանը ներկա քույր Եկեղեցիների ներկայացուցիչները ևս մասնակից էին սիրո ճաշին՝ այս անգամ արդեն իրենց ուրախությունը սեղանի շուրջ արտահայտելու ազնիվ ցանկությամբ:

Վեհափառ Հայրապետին ուղղված Ալեքսիյ Բ Պատրիարքի շնորհավորական ուղերձը կարդաց Մետրոպոլիտ Պիտիրիմը (տե՛ս էջ 28), ապա Վրաց եպիսկոպոս Թեոդորը ընթերցեց Իլիա Բ Կաթողիկոսի շնորհավորական գիրը (տե՛ս էջ 82): Հանուն Ղպտի և Հույն Ուղղափառ Եկեղեցիների նորընծա Հայրապետին շնորհավորանքներ ուղղեցին նաև Մետրոպոլիտ Բիշոյը (տե՛ս էջ 83) և Մետրոպոլիտ Դամասկինոսը (տե՛ս էջ 80): Անգլիկան Արքեպիսկոպոսի շնորհավորական խոսքը Վեհափառ Հայրապետին փոխանցեց Դեյվիդ եպիսկոպոս Ռիկքոքսը (տե՛ս էջ 84):

Հավարտ ամենայնի, եզրափակիչ խոսքով հանդես եկավ Վեհափառ Հայրապետը՝ իր ջերմագին շնորհակալությունները հայտնելով քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին՝ անկեղծ ու եղբայրական զգացումների համար:

Սեղանապան սիրո ճաշի վերջին հանգրվանով ավարտվեց Ամենայն Հայոց Հայրապետի Ձեռնադրության, Օծման և Գահակալության ամբողջ հանդիսաշարը, որը, սակայն, սկիզբն է Ամենայն Հայոց Հայրապետի ծայրագույն և ծանրագույն առաքելության՝ **«համառօտել զբանն ճշմարտութեան»** և **«հովուել զբանաւոր հօտն Քրիստոսի»**:

Բարի երթ նորընծա Հայրապետին. Ամեն:

ԱՐՇԱԿ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ